


ՄԵԾ ՍՈՒԳԸ ԵՒ ՃՇՄԱՐԻՏ ՍՓՈՓԱՆՔԸ

Երկու օրէ ի վեր այեւս պատմութեան կը պատկանի ՃՈՐՃ Ե., իր ժողովուրդէն անկեղծօրէն սիրուած եւ բովանդակ փառաքանկիւր մարդկութենէն արդարապէս յարգուած մեծ եւ ազնուասիր թագաւորը, որ ամբողջ ֆառն եւ վեց տարիներ իր պատուոյն բարձրութեանը վրայ պահեց իմաստուն եւ հզօր նախնիքներէ իրեն աւանդուած փառապանծ Գահը: Իր կեանքը՝ կեանքը եղաւ արդարասէր եւ բարի Վեհապետի մը, որ իր երկրին երջանկութիւնը ջանաց շարունակ փրկեց: Ընդհանուր աշխարհի խաղաղութեան մէջ: Այս պատճառաւ իր մահը, որ ակնթարթի մը մէջ յուզեց բոլոր մարդկային սիրտերը, տրամեցուց ոչ միայն անգլիական ազգը եւ բրիտանական աշխարհաժառաղ կայսրութեան մականին՝ հովանոյն եւ բարեկամութեան տակ ապրող բազմամիլիոն ցեղերն ու ժողովուրդները, այլ նաեւ ցաւակից համակրութեան եւ մեծաբանքի նայուածով դէպի իր եւ իր օգոստական Տան եւ իր ազնուական ազգին անունը դարձուց բոլոր միւսներուն եւս զգածուած ուշադրութիւնը: Աւելի քան քառորդ դարու այն երջանին մէջ, որ իր թագաւորութեան տեղութիւնը եղաւ, եւ ուր, տեղեւորականօրէն զորդայից իրադարձութեանց ընթացքին, սարսեցան եւ յերկիր կործանեցան բազմաթիւ գահեր, եթէ իրենը մնաց ընդմիջ անխրիս եւ ամրապինդ, ասոր բացատրութիւնը պէտք է փնտել անուանուի զիմք ծնող ժողովուրդին լրջախոհ ողջմտութեանը՝ նոյնքան նաեւ իր ի բնէ զգօն եւ զգաստ, խոհական եւ ուղղամիտ նկարագրին մէջ: Այդ տեսակէտով, ՃՈՐՃ Ե. իր ժողովրդին հոգիին իսկապէս անձնաւորութիւնը եղաւ, ու ասոր մէջ է ինքնին՝ իր մեծութեան գաղտնիքը. զի մեծ մարդիկ անոնք են՝ որոնց ինքնութիւնը կը գոյաւորուի իրենց ցեղին հոգւոյն եւ արեան ամենէն մաքուր ձիւքներուն մէջ: Իր բարձր արժանիքին ուրիշ մէկ կարեւոր կողմն էր նաեւ իր այն չնայող

147-93



709-66

յասկութիւնը, որով՝ որքան արքայական իշխանութեան նոյնքան եւ ժողովրդանուէր բարեացակամութեան, որքան օրէնքի՝ նոյնքան եւ խղճի մարդը եղաւ, ու ասոր համար իր անձն ու անունը պարուրուեցան հաւասարապէս պատկառանքի եւ սիրոյ շնորհակալի մը մէջ: Իր մահագոյծին առջեւ զգացուած ընդհանրական յուզումը, այդ պատճառաւ, արքայայտութիւնն է յայտնապէս ինքնաբերական զգացմանց միայն: Մեռաւ նա իրեններուն ծննդոյի լացին ու ամենուն արագին յարգանքին առջեւ:

Բայց, ինչ որ ամբողջ իր ազգին ու կայսրութեան ժողովուրդներու համար պէտք է արդարեւ նկատուի առիթ իրական մխիթարութեան, սա է մանաւանդ որ թագաւորներուն ամենէն երջանիկը՝ երջանիկներէն մին եղաւ նաեւ հայերուն, իր նախահայրերէն ժողովրդած ծիրանին ու մականը իր վերջին նայուածքին ու շունչին օրհնութեամբը աւանդելով արտահասոր իր Զաւկին, որ, մինչեւ երէկ դեռ իշխան Կալէտի, այսօր եղբարդ Ը. թագաւոր է արդէն Անգղիոյ եւ կայսր Մեծին Բրիտանիոյ, փառաւոր նախնիներու փառաւոր գահին իրօք եւ իրաւամբ ժառանգորդ ըստ օրինի եւ կամօքն Աստուծոյ, Թագաւորին թագաւորաց:

Այնպէս որ, վաղը, երբ ի սփիւռս տիեզերաց ճիւղաւորուած կայսրութեան մէկ ծայրէն միւսը նորէն հնչէ «Տէր կեցո՛ւ զթագաւորն»՝ անգղիական մաղթանքին ազգային օրհներգը, ամենուն սիրտերը պիտի տրոփեն օրհնութեամբը խաղաղութեան մէջ հանգչած Հօրը հոգւոյն, եւ օրհնութեամբը կեանքին անոր արժանաւոր Զաւկին, որ կուգայ ձեռք առնուլ խաղաղութեան ղեկը իրեններուն փառքին ու անոնց եւ ամենուն բարւոյն համար:

Հայոց երեսփոխան Կ. Արքուն, որ բրիտանական դրօշին հովանւոյն տակ լին վայելեց խաղաղութեան եւ յառաջդիմութեան բարիքները՝ իր հոգեւոր եւ կրթական վերածնունդին այս տասնեփնդամեակի միջոցին, իր Պետին եւ ամբողջ Միաբանութեան միջոցաւ եւ ամբողջ իր ժողովուրդին հետ սրտեղանդն զգացմամբ մասնակցելով ընդհանուր արքայայտութեանց, ամենաթագաւոր բարձրելոյն Աստուծոյ կը մատուցանէ ի խորոց սրտի աղօթք՝ օգոստոսական հանգուցելոյն յաւիտեական հանգիստին եւ իր արժանաժառանգ Յաջորդին եւ որդւոյն կեանքին եւ արեւտաւորութեան համար, երգելով.

«Թագաւոր փառաց Աստուծո՛ւ Հոգիդ կենդանարար, նորոգեալ կենդանութիւն մեռոյ թագաւորին, զի օրհնեսցուի զեղ, Տէր, այժմ եւ յաւիտեան»:

23 յունվ. 1936

